Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

323.1
U-51

15 JAN 2010

1331

Հրատարակութիւն Գուստէնբէրգ գրախանութի

ԱԼԻՔՍԱՆԴՐ ԱՄՓԻՏԷԱՏՐՈՎ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Թարգմ. Մխիթարեան

323.1 (47.925)
Ա-51

1906
Էլեքտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկեր.,
Մադաթեան փողոց (144).
ԹԻՖԼԻՍ

3234
Ա-51
26 SEP 2006

Հրատարակուիւն Գուստէնբէրգ գրախանուիս

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՄՓԻՏԷԱՏՐՈՎ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

222
289
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
7/XI-1922
имени Мясникова
Ա. ՄԱՍՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թարգմ. Ս. Մխիթարեան

1906
Էլեկտրատարած տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկեր.,
Մաղաքեան փողոց (144).
ԹԻՖԼԻՍ

08 .02. 2013

16503

Дозволено цензурою. Тифлисъ, 23 феврал 1906 г.

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

—

Զարհուրելի դէպքերը, որոնք տեղի ունեցան Անդրկովկասում, նորից առաջ քաշեցին և լուսաբանեցին Եւրոպայի համար չարաբաղդ հայկական հարցը։ Նախ թուրքական, իսկ հիմա կօզակների անգթութիւնները ռուսական սահմանից այս կողմն այցկայցրին Աբդուլ-Համիդի հարևան պետութեան բարքերն ու քաղաքականութիւնը և մի և նոյն ժամանակ սուլթան Աբդիւլ-Համիդի զօրքերը մօտեցան ռուսական սահմանին ու կանգնեցին այնտեղ ակնյայտնի կերպով սպառնական դիրք ընդունելով։ Կուրացած կամայականութեամբ և ազգայնական նախապաշարմունքներով, անմտօրէն օժտված լիազօրութիւններով՝ կովկասեան իշխանութիւնը, լիապէս օգնութիւն և խրախոյս գտնելով Պետերբուրգի աւելի ևս կոյր ու մոլորված կենտրոնի կողմից, անընպատելի կերպով դաշնակից դարձաւ իր ամենախորամանկ և ամենակատաղի արտաքին թշնամիներից մէկին՝ ծայրագաւառային ազգաբնակութեան մի ազգային խմբի դէմ, որ

դեռ քիչ ժամանակ առաջ ամենից աւելի խաղաղը, ամենից աւելի օգտակարն և, թերևս, ամենից աւելի պահպանողականն էր։

Ես շարունակ երկու տարուց աւելի ապրել եմ արտասահմանում, մեծ մասամբ Պարիզում, և այդ ժամանակամիջոցում շատ եմ եղել ռուսահայերի հասարակութեան շրջանում և շփվել այդ կամայ կամ ակամայ էմիգրանտների հետ։ Նրանք մեծ համակրութիւն են վայելում Եւրոպայում։ Այստեղ Անդրկովկասեան խրժդըժութիւններից ստացվող տպաւորութիւնը խորն է և տիրում է առհասարակ մեծ զայրոյթ, իսկ վերաբերմունքը դէպի ռուսական քաղաքականութեան քաջսական տատանումները հայկական հարցի մէջ—եթէ միայն կարելի է այդ արիւնալից անմտութիւնը քաղաքականութիւն համարել—չափազանց ցասկոտ է ու արհամարհական։

Բաւական է ասել, որ տառապող հայութեան պաշտպաններ հանդիսանում են Պարիզում այնպիսի անձինք և հեռատեսներ, ինչպիսիք են Ժան Ժորէս, Կամիլ Պէլտան, Ֆրանսիս Պրէսսանսէ, Անատոլ Ֆրանս. ուրեմն և դժուար չէ երևակայել այն մրրկալից շանթերը, որոնցով նրանք անիծում են ռուսական բռնութիւնները իրանց ճարտասանական ամբիոններից։ Աւելորդ է ասել, որ ռուս մարդը, ծանօթանալով հայ էմիգրանտների հետ, չէ կարող նրանցից դուրեկան հաճոյախօսութիւններ և փաղաքշանք սպասել, որոնք շոյէին նրա ազգային ինքնասի-

բութիւնը. և ինչ յուսով պէտք է սպասէ.—արժանի չէ։ Բայց ես շատ անգամ զարմացած եմ մնացել՝ տեսնելով այն քաղաքական տակտը, որով նրանք վերաբերվել են Անդրկովկասեան անմտութիւններից ստացված տպաւորութիւններին, այն փորձառու և դժուարին խոհեմութիւնը, որով նրանք իրանց ազգային սուգի և թշուառութեան արտայայտութիւնը ենթարկում են ապագայի հեռաւոր միտումներին։ Ապշեցնում էր ինձ և այն հանգամանքը, որ այսպիսի մռայլ և խառնափնթոր ժամանակ, երբ մի կողմից տեղական անակընկալ չափազանցութիւնները, միւս կողմից ռուսաց քաղաքական սխալները, երրորդ կողմից ռուսաց պատերազմական անաջողութիւնները և չորրորդ կողմից ռուսական ներքին խռովութիւնները հաւասարապէս զայթակղեցնում են, կարծես, յեղափոխական տրամադրութեամբ համակված խմբերին ի լուր աշխարհի յայտարարելու Ռուսաստանի լիակատար կործանումը, նրա պետական միութեան անդամահատումը և պատմութեան ընթացքում նրա նուաճած ազգերի առանձնացումը, հայ էմիգրանտները, քիչ բացառութեամբ, ամենևին չէին հրապուրվում այսպիսի հեռանկարով։ Ուղիղ է, վրիժառու չարախնդացութեան ըստպէական բռնկումներ երբեմն նկատվում էին, որպէս արդար հատուցումն վիրաւորված ազգային բնազդի, սակայն ազգային բանականութիւնն և խելքը, հակառակ սանձարձակո-

ըէն մրրկվող տարրերի, անընդհատ կրկնում և յիշեցնում են հայերին միշտ մի և նոյն բանը—այն, որ նրանց կապը Ռուսաստանի հետ պատահական չէ, այլ օրգանական։ Այդ կապը հանդուցել է պատմութիւնը, որպէս հայ ժողովրդի ապահովագրութիւն մահմեդականութեան հոսանքից ոչնչանալու դէմ։ Քանդել նրան անկարելի է—դա կը լինէր ազգային ինքնասպանութիւն։ Այն անհանդուրժելի տանջանքները, որոնք ստեղծվեցին հայ ժողովրդի համար վերջին երկու տասնամեակի ռուսացման քաղաքականութեամբ և որոնք, իբրև պատասխան, ստեղծեցին այժմեան յեղափոխական շարժումը, միայն ժամանակաւոր չարիք են, որոնց մէջ Ռուսաստանը, որպէս ռուսաց ժողովրդի կամքն և գործունէութիւնն արտայայտող ամբողջութիւն, մեղաւոր չէ։ Անարդար կը լինէր, որ ահագին ամբողջութիւնը պատասխանատու համարվէր իր ինչին, թէպէտև պատահմամբ իշխանութիւն ունեցող, մասի պատճառով։

Յեղափոխութեան փոթորիկը, որ այժմ տակն ու վրա է անում Ռուսաստանը, ստեղծում է նրա մէջ մի և նոյն ժամանակ նոր կարգ ու կանոն, նոր հիմքերով և պետական կեանքի նոր ընթացքով, որոնց հետ միասին չեն կարող և չը պէտք է գոյութիւն պահպանեն ծայրագաւառային հին չարիքները։ Հայ ժողովուրդը լի է խելացի համբերատարութեամբ։ Հայերը շատ լաւ ճանաչում են իսկա-

կան մեղաւորներին,—նրանց, որոնք ստեղծեցին Անդրկովկասի այժմեան թշուառութիւնները, և գիտեն, թէ իրանց ատելութիւնն ու ժողովրդական զայրոյթը ում վրա պէտք է կենտրոնացնել. նրանք այդ զայրոյթը չեն ուղղում ընդհանրապէս ռուսների և Ռուսաստանի ամբողջութեան, որպէս նոր կազմակերպվող պետական մի դաշնակցութեան դէմ, այլ արդարացի կերպով ուղղում են նրանց դէմ, որոնք արժանի են զայրոյթի։ Ընդհակառակը՝ տայ Աստուած, որ Ռուսաստանի պետութեան հետ կապված ամեն մի ցեղի մէջ գոյութիւն ունենայ ազգային փոխադարձ պաշտպանութեան անհրաժեշտութեան, ռուսների և հայերի հաստատուն և հաւասար դաշնակցութեան այնպիսի խոր գիտակցութիւն, որպիսին ես տեսայ Պարիզի հայ էմիգրանտների շրջաններում։ Այդ շրջանները չափազանց աշխոյժ են, գործունեայ և հետաքրքրական։ Նրանց աշխատանքը, որ դրված է միջազգային հիմքի վրա, չունի իր մէջ ոչ մի գաղտնիք ոչ նպատակի և ոչ միջոցների կողմից դա սիստեմատիքական, բաց-աշկարայ մաքառում է օսմանեան պետութեան դէմ եւրոպական հասարակական կարծիքի աջակցութեամբ։

Եթէ մեր Անդրկովկասում շարունակվի ներկայի դժնդակ քաոսը, եթէ ծայրագաւառային ազգութիւններին իրար դէմ հանելու՝ Թիւրքիայից փոխ առած արիւնոտ սիստեմը յաղ-

թանակէ, եթէ Ռուսաստանը դժբախտութիւն ունենայ պարգևելու Կովկասին մի որ և է նոր Գոլիցին համապատասխան հրահանգներով և լիազօրութիւններով, այն ժամանակ, ի հարկէ, հայկական ազգային ինքնապաշտպանութեան աւերիչ աշխատանքը՝ բարոյական աջակցութիւն գտնելով Եւրոպայի բոլոր ազգերի կողմից,—իսկ վաղ թէ ուշ որ և մէկը այդ հզօր ազգերից անշուշտ իրան համար ձեռնտու և օգտաւէտ կը համարէ բարոյական համակրանքը փոխելու նիւթական աջակցութեան,—ահա այդ դէպքում, ես ասում եմ, հայկական յեղափոխութեան աւերիչ թափն ու հուանդը անպայման դատապարտված են անցնելու Արաքսն և հաստատվելու Քռի ափերում։ 1905 թուականի ձմեռը ցոյց տուեց մեզ այդ բանի մէջ իր առաջին նշան—ծաղիկները, որոնք, ուղիղ է, անխնայ կերպով հնձվեցին կօզակների սրերով, բայց բանն այն է, որ ժողովրդական հրդեհները չէ կարելի հանգցնել արիւնով, և ուր եղել են ծաղիկներ, այնտեղ կը լինեն և պտուղներ, իսկ պտուղ հաւաքելը ամենևին այն չէ, ինչ որ ծաղիկ հնձելը։ Եւ այն տխուր հանգամանքի մէջ, որ Հայկական Լեռնաշխարհի արնաշաղախ հողից սպառնական կերպարանքով կը բուսնեն կարմիր տանջանքի ցաւոտ ծաղիկներ և հասունացած վրէժխնդրութեան արնագոյն պտուղներ, ռուս կառավարութիւնը, բացի իրանից, չէ կարող ոչ ոքի մեղադրել։ Ամեն մի

համբերութիւն վերջ ունի և ով, ինչպէս ասում է ռուսաց առածը, քամի է ցանում, նա կը հնձէ փոթորիկ։ Եւ սակայն թէ իր ներքին միտումներով և թէ արտաքին նպատակներով հայ էմիգրանտների այն գործունէութիւնը, որ արտայայտվում է «pro Armenia» խօսքերով և որ կատարվում ու խմբվում է նոյն անունը կրող թերթի շուրջը, մինչև այժմ սկզբունքով ոչ միայն չէ եղել հակառուսական, այլ և ոչ մի ջանք չէ խնայել միշտ անխզելի պահելու և ամրապնդելու իր համար ռուսական կապերն ու համակրանքը։

Հայկական հարցի սուր կերպարանք ստանալը մեր ծանր օրերում և այն խորին զայրոյթը, որ ծնեցնում են Կովկասից հասած լուրերը, նամակներն և լրագրական տեղեկութիւնները, դրդեցին ինձ մի քանի յօդուած գրելու այն բանի մասին, թէ ուրոպական հասարակութիւնը ինչ ու ինչ է արել, անում է կամ մտադիր է անելու, որպէս զի այդ թշուառագոյն ժողովրդի համար հաստատվի որ և է քաղաքական կարգի նման մի բան, կարգ, որ կարողանար պաշտպանել մարդկային անձնաւորութիւնն և բարեկեցութիւնը։

Դէպքից օգուտ եմ քաղում յայտնելու իմ խորին շնորհակալութիւնս բոլոր այն անձերին, որոնք նիւթեր մատակարարեցին ինձ հայկական մարտիրոսագրութեան քաղաքական ուսումնասիրութեան համար և նրանց հետ միասին ու ամենից առաջ բժ. Ի. Զ. Լօրիս-Մե-

լիքեանին, «Pro Armenia»-յի այդ անխոնջ աշխատաւորին, որ լուսաբանեց ինձ համար հարցի բազմաթիւ մութ կէտերը վառվռուն հայրենասէրի խոր անկեղծութեամբ և իսկական եւրոպացու զեղեցիկ անաչառութեամբ։

—

Հայկական հարցը Եւրոպայի առաջ պաշտօնապէս դրվեց միայն ռուս-թիւրքական պատերազմից յետոյ՝ Բերլինի դաշնագրի զօրութեամբ, որ իր 61-րորդ յօդուածով խոստանում էր տալ թիւրքահայերին մի քանի տարրական բարեփոխութիւններ։ Որքան էլ ժլատ էին եւրոպական վեց պետութիւնների երաշխաւորութեամբ վկայագրված այդ խոստումները, այնուամենայնիւ նրանք կարծես յարութիւն տուին թիւրքական լծի տակ տանջված ու մաշված հայ ժողովրդին և արծարծեցին նրա մէջ մօտալուտ լաւագոյն ապագայի յոյսեր։ Բայց... քիչ կան պատմութեան մէջ աւելի վիրաւորական, աւելի անգութ և աւելի սառեցուցիչ հիասթափութեան դէպքեր, քան այն, որ բաժին ընկաւ հայկական յոյսերին։ Փոքրիկ, սահմանափակ բարիքների փոխարէն, որոնք սպասվում էին Բերլինի դաշնագրի համաձայն անվութօրէն նետված 61-րորդ յօդուածից, նա, այդ յօդուածը, առաջ բերեց հայ ժողովրդի համար անսպասելի տառապանքներ, որոնք թերևս գերազանցեցին անցած դարերի թշուառութիւնները, երբ հայը հեծում ու մաշվում էր մահմեդական աշխարհի ճնշման դէմ մղած պայքարի մէջ իր գոյութեան իրաւունքի համար։ Ես մտադիր չեմ պատմելու ab ovo հայերի պատմութիւնը։ չէ՞ որ հարկաւոր կը լինէր սկսել ասորա-բաբելական դարերից։ Կը յիշեցնեմ միայն, որ հայերը քրիստոնէական քաղաքակրթութեան ամենահին ազգն են և Ասիայում մահմեդական պետութիւնների հիմնվելուց յետոյ՝ նրանք բնականաբար առաջապահակ և պատուար են մահմեդական մոլեռանդութեան արշաւանքի դէմ այդ քաղաքակրթութեան վրա։ Անցկացնելով դարեր ծանր պատերազմական դրութեան մէջ, զոհ դարձած բազմատեսակ ազգային և կրօնական հալածանքների, հայ ժողովուրդը բնականաբար պէտք է մեծ հատուածներ առաջ բերէր իրանից դէպի Եւրոպայի և Ասիայի զանազան երկիրները։ Հայաստանի ընիկ աղգաբնակութիւնը խաղաղ, առաւելապէս երկրագործ, արհեստի հակամէտ և առևտրի ընդունակ մի տարր է։ Երկար դարերի պայքարը մահմեդականների մոլեռանդութեան դէմ կռել-կոփել է նրան և կազմել նրանից մի մեծ բարոյական ոյժ։ Նրա կրօնական և ազգային անյողդողդ դիմացկանութիւնը ողողված է արեան գետերով։

Բաժանվելով Ընդհանրական Ժողովից, հայ լուսաւորչական եկեղեցին, առանձնացած բիւզանդական և լատինական քրիստոնէութիւնից, սերտ դաշն կապեց ազգի հետ և դարձաւ մի տեսակ նրա պատմական նշանաբանը։ Քրիս-

տոնէութիւնը Հայաստանում, պաշարված ամեն կողմից մահմեդականութեան մրրկածուփ ովկիանոսով, երկար դարերի ընթացքում քաղաքակրթութեան դրօշակ էր և առաջադիմութեան փարոս։ Այս պատճառով էլ երբ հայ ժողովուրդը շփվեց Մոսկվայի քրիստոնեայ թագաւորութեան հետ (XVII-դ), յարեց նրան, ինչպէս հարազատի՝ իր բոլոր համակրանքներով։ Երեք հարիւր տարվայ ընթացքում հայ ժողովուրդը անփոփոխ կարապետ և օժանդակ հանդիսացաւ ռուսական ազդեցութեան Կովկասում։ Ռուս թագաւորները շատ լաւ հասկանում էին այդ բարոյական միութեան օգուտը և շատ անգամ աշխատում էին հաստատել և ամրապնդել նրա կապը իրանց երախտագիտական արտայայտութիւններով։ Ռուսական քաղաքակրթութիւնը հայերն ընդունում էին ամենայն պատրաստականութեամբ։ Հայկական ընտանիքներում երեխաներին դեռ օրօրից սովորեցնում էին ռուս լեզուն. հայը իր սրբազան պարտքն էր համարում մօտենալ ու բարեկամանալ ռուս հասարակութեան հետ, պարծենում էր ռուսի նման ապրել իմանալու եղանակով, ռուսական սովորութիւնների և բարքերի գիտութեամբ, ռուսական ինքնաեռով և ռուսերէն խօսելով։

Թիւրքահայերը նախանձով էին նայում անդրկովկասեան հայերի վրա և երազում էին մի բան միայն—տեսնել իրանց նոյն պայմանների մէջ։ Վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ հայ ազգաբնակութիւնը, հոգևորականների առաջնորդութեամբ, դիմաւորում էր ռուս զօրքերին խաչով ու խաչվառով։ Ռուսաց զօրքը քայլում էր դէպի իր փոքրասիական յաղթութիւնները մի երկրով, որ լռելեայն յարձակողական դաշն էր կապել նրա հետ։ Հայ ինտելլիգենցիան չէր զատում իրան ռուսականից, և ինչպէս ամբողջի մի մասը՝ գնում էր նրա բոլոր հոսանքների հետ, հանդէս բերելով և առաջնակարգ մարդիկ, և յետադէմներ,—ազատամիտներ և կղերականներ, յեղափոխականներ և աստիճանաւորներ, խաղաղութեան անձնատուր անձինք և գեներալներ, սահմանադրականներ և ինքնակալութեան սիրահար բիւրօկրատներ, նոյն իսկ մինիստրներ, ինչպէս Դելեանովը, և դիկտատոր, ինչպէս Մ. Տ. Լորիս-Մելիքովը։

Հայ գրականութիւնը կատարում էր իր կուլտուրական-կրթական աշխատանքը համարեա բացառապէս ռուս օրինապահ գրականութեան միջոցներով՝ կամ թարգմանելով ռուս կլասսիքների գրուածքները, կամ փոխադրելով նրանց ու վերածելով այնպիսի ձևերի, որոնք յարմարվում են տեղական կեանքի պայմաններին։ Ես դրականապէս պնդում եմ, առանց վախենալու հերքումներից, որ մինչև իննսնական թուականները հայ հասարակական կեանքի հոսանքում, նրա որ ճիւղն ու որ ընթացքն էլ վերցնելու լինէք, չէ եղել սեպարատիստական ձգտումների հետքն անգամ և

հայ հասարակութիւնը չէր զատում-բաժանում իր բաղդը Ռուսաստանի և ռուս ժողովրդի բաղդից։ Ես աւելին կասեմ. մինչև անգամ Թիւրքիայում, չը նայելով զարհուրելի ճնշումներին, որոնց ենթարկված է հայ ժողովուրդը, նա այն ժամանակ գերադասում էր Բերլինի դաշնագրի որոշ յօդուածից բղխող յոյսը պայմանական և օդային երազներից մի ինչ-որ սեփական անկախ թագաւորութեան մասին։

Յետագայում, երբ միջազգային խարուսիկ խոստումները օդը ցնդեցին, առաջ եկան ազգային խմբակներ և կազմակերպութիւններ, որոնք հռչակվեցին սեպարատիստական, բայց իսկապէս նրանց ձգտումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ստանալ խոստացված բարեփոխութիւնները։ Այդպէս էր նոյն իսկ «Հնչակ» թերթի կուսակցութիւնը, մի թերթ, որ հրատարակվում էր Ժընէվում ռուս էմիգրանտների ազդեցութեան տակ և սոցիալիստական դունաւորութեամբ։ Հէնց նոյն ռուսական ազդեցութեան աղբիւրից էլ ծնունդ առաւ հայ դաշնակցական յեղափոխական կազմակերպութիւնը՝ նախաձեռնութեամբ Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների նախկին ուսանողների։ Այստեղ, իբրև աստուածներ, պաշտվում էին Տուրգենևը, Դոստոյևսկին և մանաւանդ Միխայլովսկին։ Այսպէս ուրեմն, նոյն իսկ իրանց «յեղափոխութեան» մէջ հայերը չէին հեռանում ռուսական կուլտուրայի հիմունքից և

մտցնում էին նրա ուսմունքները, որպէս իդեալներ, իրանց սեփական կեանքի մէջ։

Դաշնակցական այդ կազմակերպութիւնը մինչև անգամ իր ծրագրի մէջ չը մտցրեց սոցիալիստական ուսմունքների պաշտամունքը։ Գլխովին անձնատուր եղած Թիւրքահայերի պաշտպանութեան՝ նա իր գործունէութիւնը ցոյց էր տալիս բացառապէս նիւթական և բարոյական օգնութիւն հայթայթելով կարօտ հայրենակիցներին։ Կուսակցութեան քաղաքական պահանջներն այնքան չափաւոր էին, որ 1896 թուականի նոյեմբերի 3-ին, մի հարցապնդումի ժամանակ հայկական գործերի վերաբերմամբ ֆրանսիական պարլամէնտում, Կոշէնը (D. Cochin), մի պահպանողական և կաթոլիկ պատգամաւոր, հնարաւոր համարեց բառ առ բառ կարդալ այդ յեղափոխականների ամբողջ ծրագիրը և պատգամաւորական ժողովը միաձայն ընդունեց նրան բաւարար։

Ռուսահայերի վրա, իբրև մեղք, բարդում էին այն հանգամանքը, որ նրանք անցնում են Թիւրքական սահմանը պինաւորված օգնութիւն հասցնելու իրանց եղբայրներին և փրկելու նրանց կորստեան վտանգից։ Այդ հայրենասիրական բռնկման հալածողները մոռանում էին սերբիական պատերազմը, ռուս կամաւորներին և Զերնեաևին։

Ներկայումս հանգամանքները խիստ կերպով փոխվել են։ Ռուսաստանի և վրդովված հայ հասարակութեան մէջ բացված է մի

լայն ու խոր վիհ։ Այդ անդունդը փորելու համար աշխատել է մի վարպետ, համարեա հանճարեղ ձեռք։ Պառակտումը Ռուսաստանի և հայութեան մէջ վրիժառութիւն է Թիւրքիայի կողմից այն պարտութեան համար, որ նա կրեց պատերազմի դաշտում՝ ընկճված ռուսաց զէնքի ոյժից,—երբ ազատելով սլաւոնների, ռուսները կանգ առան Կ. Պոլսի պատերի առաջ,—և միաժամանակ հետևանք է Ռուսաստանի դիւանագիտական պարտութեան Բերլինի կոնգրէսում։ Պառակտման գլխաւոր կազմակերպողը ամենուրեք էր և դեռ մնում է —խելօք, փառասէր և շրջապատողների համար հմայիչ սուլթան Աբդիւլ-Համիդը, արևելեան բռնակալի մի տիպար՝ օժտված միջին դարերի բոլոր ձիրքերով և արատներով, մի մարդ, որին Գլադստոնն անուանում էր «Մեծ մարդասպան»։ Միայն ապագայի, և այն էլ դուցէ ոչ մօտաւոր ապագայի, պատմութեանը կաջողվի լուսաբանել այն խորամանկահիւս ցանցը, որով այդ թագակիր Մաքիավելին, ոտքից մինչև գլուխ շաղախված մարդկային արեան մէջ, կարողանում էր խաբել և դեռ մինչև այժմ խաբում ու քթից բռնած ման է ածում եւրոպական պետութիւններին՝ հաստատելով իր բարեկեցութիւնը նրանց փոխադարձ երկիւղի և տարաձայնութիւնների վրա։

Հասկանալի է, որ ինչպիսի էլ դաշնագրեր ու յօդուածներ գրվէին, սուլթանը չէր կարող թոյլ տալ, որ իր քրիստոնեայ հպատակների

մէջ զոյութիւն ունենային ինքնավարական շարժումներ. դա ազգանշան կը լինէր Թիւրքիայի կործանման և Աբդիւլ-Համիդի անձնական կորստեան։[1]) Առանձնապէս վախեցնում է նրան իր միահեծան սուլթանական հեղինակութեան անկումը Փոքր-Ասիայում, այդ հայաբնակ, ինչպէս անուանում է ինքը Աբդիւլ-Համիդը, «պետութեան իրանի» մէջ։

Արևելքում Ռուսաստանի պատմական ախոյեան Անգլիայի օգնութեամբ՝ Աբդիւլ-Համիդը ջախջախեց ռուսներին Բերլինի կոնգրէսի դիւանագիտական մրցման մէջ և թէպէտ կորցրեց Բոլգարիան ու մի քանի փոքրասիական գաւառներ, բայց և այնպէս աջողութեամբ ազատվեց բարենորոգումների դաժարկ խոստումներով Հայաստանի և Մակեդոնիայի համար Եւրոպայի այն պահանջներից, որոնք ամենից աւելի վտանգ էին սպառնում նրան։ Թէ մէկ և թէ միւս երկրի թշնամութիւնը լիակատար դարձնելու համար, բարենորոգումների իրականացումն և գործադրութիւնը յանձնվեցին եւրոպական պետութիւն-

[1]) Մենք այս կէտում համաձայն չենք յարգելի հեղինակի հետ։ Թիւրքահայաստանի «ինքնավարութիւնը» ոչ միայն վնաս չի բերի Թիւրքական պետութեան, այլ նոյն իսկ անագին, անգնահատելի ծառայութիւններ կը մատուցանէ նրան։ Դժբաղդաբար, «խելօք» համարված սուլթան Աբդիւլ-Համիդը անկարողանալով է ըմբռնելու «հայկական ինքնավարութեան [illegible] օգուտները, դէպի որը նա տանում է [illegible] Ծան. Թարգմ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. ԳԱ
7/XI-1922
ИМЕНИА. МЯСНИКЯНА
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ների ընդհանուր վերահսկողութեան և այս հանգամանքը զրկեց բարենորոգումները հարկադրական ուժից ու դարձրեց Բերլինի դաշնագրի ազատարար յօդուածները մեռած տառ, որով սուլթանը խաղում է, ինչպէս ուզում է։ Առևտրական մենարտօնութիւնների, ընծաների և դիւանագիտական զիջումների պատրուակով տուած «բաքշիշների» շնորհիւ՝ նա միշտ կարողանում է գնել մի որ և է պետութեան բարեացակամութիւնը և այդ պետութիւնը, կաշառված, համաձայնում է նրա հետ։ —Մենք բարենորոգումների հարցը չենք բարձրացնի, մենք կը կը լռենք և կը պահպանենք statu quo, բայց, խնդրեմ, դուք էլ այնպէս արէք, որ ձեզանում, գոնէ արտաքուստ, ամէն ինչ խաղաղ լինի։

Սուլթանը միշտ ու անփոփոխ կերպով խոստանում է և միշտ ու անփոփոխ կերպով էլ խաբում է նոյն իսկ այդ բանում։ Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել։ Նրա նենգաւոր խոստումների և քրիստոնեայ հպատակների խաղաղութեան միջև, որպէս արնախում թշնամի, կանգնած է ամենից առաջ նրա անձնական «մեծութեան խելացնոր տենչանքը», որին կերակրելու և յագեցնելու համար նա կարօտ է դրամի. ահա սրանով նա լցնում է իր պահարանները՝ քամելով հարկերի և բազմատեսակ տուրքերի առմամբ իր բայեազի արիւն-արտասունքը։ Սուլթանին աշխատում են նմանվել նրա հաւատարիմ ծառաները, մեծից սկսած մինչև փոքրը, և այսպիսով ստեղծվում է կատարելապէս անտանելի բռնակալութեան և կազմակերպված, անհաշիւ կողոպտման մի ռէժիմ։

Աբդիւլ-Համիդը հեռանկատ մարդ է։ Նա նախատեսեց համասլաւօնականութիւնից և համագերմանականութիւնից առաջանալիք վտանգը և ժամանակին, որպէս ուղղահաւատների խալիֆ, հակադրեց նրանց համիսլամական գաղափարը։ Համիսլամականութեան գործակալ-քարոզիչները հեղեղեցին Կովկասը և նրանց կրօնական մոլի ու ճարպիկ քարոզչութեան արիւնոտ հետևանքները շուտով զարհուրեցրին Եւրոպայում ամենքին, ով ընդունակ է մտածելու և զգալու։

Բայց կացինը դիպաւ քարին։ Սուլթանն և նրան հովանաւորող պետութիւնները մոռացել էին, որ հայերը մի որ և է աֆրիկական վայրենի ցեղ չեն, որ գոյութիւն է պահպանում կամ ոչնչացնվում եւրոպացիների քմահաճոյքով։ Նրանք մոռացել էին, որ հայ ժողովուրդը հարուստ է պատմական աւանդներով և ազգային ինքնագիտակցութեամբ։ Հայերը թոյլ չը տուին մոռացութեան մատնելու խոստացված բարենորոգումները։ Նրանք անընդհատ յիշեցնում էին աշխարհին իրանց դրութիւնը տպագրական խօսքով, ցոյցերով, կամաւորների հոսանքով՝ օգնութեան հասնելու փոքր-ասիական ըմբոստներին։ Այս երկու պատճառների—բարբարոս պրովոկա-

տորական ըէժիմի և նրա յեղափոխական դիմադրութեան—միաժամանակեայ գործունէութիւնը հասցրեց այնպիսի «խաղաղութեան», որ իր զարհուրանքով հաղիւ թէ հաւասարը ունենայ մարդկային պատմութեան մէջ։ 1894—96 թւականներին, սուլթանը, որ և է բարենորոգման փոխարէն, վճռեց ուղղակի ջնջել-կոտորել հայերին և ուրեմն ոչնչացնել Բերլինի դաշնագրի ձանձրացուցիչ 61-րորդ յօդուածը՝ երբ այլ ևս գոյութիւն չեն ունենայ նրանք, որոնց պէտք է նա հովանաւորէր։ Կոտորածը արժանացաւ սուլթանի եւրոպական բարեկամների օրհնութեանն և բարեմաղթութեանը։ — «Massacrez, Majesté, massacrez». Ջարդեցէք, Վեհափառ Տէր, ջարդեցէք.— Ռուսաստանի ներկայացուցիչ դեսպան Ա. Ի. Նելիդօվի այս առասպելական խորհուրդը, եթէ մինչև անգամ չարտասանվեց ի լուր, այնուամենայնիւ ճախրում էր Իլդիզ-Կիոսկի օդի մէջ ու ոգևորելով Իսլամը՝ 300,000 հայերի արեան դին դարձաւ։ Յայտնի է, որ հայկական մեծ ու փոքր կոտորածների քաղաքականութիւնը աջողութեամբ գործադրվում է մինչև հիմա։

Ռուսաստանի վերաբերմունքը դէպի այդ մարդկային սպանդանոցը՝ ցաւով ու ամօթով հարկադրված ենք բնորոշել մի խօսքով,— թոյլտուութիւն։ Փորձելով ազատված Բոլգարիայի յայտնի «երախտամոռութիւնը»՝ Ռուսաստանը հրաժարվեց մերձաւոր Արևելքի

քրիստոնեայ ազգութիւններին ազատարար հանդիսանալու դերից և դարձրեց քայլերը դէպի այլ ճանապարհ։ Արտաքին քաղաքականութիւնից առաջացած հիասթափութիւններին միացաւ ութսուսական և ինտանական թւականների ըէակցիան իր նուաճողական ծրագրով, որի համաձայն միապետութիւնը հասկացվում էր, որպէս ուղղափառութեան և ռուսականութեան նշանաբան, իսկ ռուսականութիւնը առաջարկվում էր որպէս պսակ ապագայ համասլաւոնական շէնքի։ Համահաւասար ռուսացման քաղաքականութիւնը մուտք գործեց Կովկաս մի ամբողջ շարք սիստեմատիքաբար կազմակերպված ապօրինի, խիստ կարգադրութիւնների միջոցով, որոնք ուղղված էին հայերի դէմ՝ կոպիտ և յամառութեամբ գրգռող բռնութիւնների հետ միասին։ Տեղական իշխանութիւնը իր կողմից բորբոքում էր կրակը և նկատելով, որ Պետերբուրգին հաւանելի է հայերի պետական յանցաւորութեան գոյութիւնը, գրգռում էր կառավարութիւնը հայերի դէմ յաճախակի կրկնվող փքուն «փաստերով»։ Առանձնապէս արտասուելի դեր առաւ իր վրա այդ ողբերգութեան մէջ կառավարչապետ Գոլիցին՝ շրջապատված կիսապաշտօնական պրովոկատորներով, ինչպիսին էր, օրինակ, հանգուցեալ Վէլիչկօն։ Նա սիստեմատիքաբար մղում էր Կովկասի տեղական ազգութիւնները դէպի ցեղային կատաղի պատերազմ։ Առաջ յանցաւոր քարոզչութիւնը

կատարվում էր մամուլի և կառավարութեան կողմից շեշտված կեղծաւոր նախապատուութեան միջոցով, որպէս զի հայերի դէմ հանեն վրացիներին։ Այդ ծրագիրը չիրագործվեց։ Իննսնական թուականների վերջում, Գանձակում, բացվեց մի դաւադրութիւն, գտնվեցին Աբդիւլ-Համիդի կոչերը և համիսլամական շարժումը դադարեց գաղտնիք լինելուց Գոլիցինի համար։ Սակայն փոխանակ հասկանալու այդ գիւտից բղխող մեծ սպառնալիքը՝ կովկասեան «քաղաքագէտ» պաշտօնեան միմիայն ուրախացաւ՝ նախատեսելով համիսլամականութեան մէջ մի ապագայ զէնք հայերի դէմ։ Եւ այդ զէնքը գործի դրվեց։

Ռուս-հայկական ողբերգութեան մէջ, ըստ սովորականին, բեմիսսեօրի պաշտօնը կատարում էր սուլթան Աբդիւլ-Համիդը։ Մի ձեռքով նա ուղարկում էր դէպի Կովկաս իսլամի մոլեռանդ գործակալներին, իսկ միւսով գրրում նենգաւոր դիւանագիտական մատնութիւններ, որոնք երկիւղ էին ազդում ռուսաց դիպլոմատիական շրջանների վրա, մանաւանդ որ Աբդիւլ-Համիդի համար շատ հեշտ էր ձեռաց սարքել արդարացուցիչ փոքրիկ փաստեր, որոնց կազմակերպելու մէջ նա այնքան ընտել ու վարպետ է։ Ռուս-հայկական յարաբերութիւնների վատացման հարցի մէջ առաջին նշանակութիւն ունէր և ռուսաց արտաքին քաղաքականութեան կենտրոնի տեղափոխումը դէպի Ծայրագոյն Արևելք։ Ռուսաստանը մոռացաւ հայկական կուլտուրական առաջապահիկ դերի պատմական նշանակութիւնը, վճռեց, թէ հայերը Մերձաւոր Արևելքում այլ ևս իրան հարկաւոր չեն ու իր պետական նաւի վրայից դուրս շպռտեց նրանց։ Ռուսական դրդռիչ քաղաքականութեան խիստ և ապօրինի կարգադրութիւններին հայերը երկար ժամանակ պատասխանում էին լուռ հնազանդութեամբ։ Համբերութեան բաժակը լցրեց եկեղեցական կալուածների գրաւումը,— Պետերբուրգը հարուած հասցրեց հայութեան ազգային գրոշին—եկեղեցուն—և գրանով պարզ ցոյց տուեց, որ հայերին, իբրև ազգութիւն, նա մտադիր չէ բանի տեղ դնել ու աւելորդ ընդշութիւններ բանեցնել նրանց հետ։ Եւ ամբողջ հայ ժողովուրդը բորբոքվեց միահամուռ, ակամայ և բնական զայրոյթով։ Նա վառվում է, եռ է գալիս, և բանի ուժով անկարելի է հանգցնել այդ զայրոյթը։

Ռուսական քաղաքականութեան նշանաբանը Հայաստանի վերաբերմամբ դարձաւ Լոբանով-Ռոստովսկու ասածը. «Մենք երկրորդ Բոլգարիա չենք ուզում»։ Այս խօսքերը, ի հարկ է, չափազանց ձեռնտու էին սուլթան Աբդիւլ-Համիդին, որը իր կարգին դաւանում է «Հայաստան առանց հայերի» գաղափարը։ Ռուսաց դիպլոմատիան քանդեց նրա ձեռքի կապանքները՝ իրաւունք տալով ազատօրէն գործադրելու «սրի և արեան» քաղաքականութիւնը։ Յայտնի է, թէ Կովկասեան իշխանութիւնը

ինչպիսի խստութեամբ էր վերաբերվում դէպի հայ կամաւորները, որոնք անցնում էին սահմանը Թիւրքա-Հայաստան մտնելու։ Կոզակների պահակները գնդակահար էին անում նրանց առանց դատի ու դատաստանի, ինչպէս շների։ 1896 թուականի նշանաւոր գիշերներին Կ. Պոլսում՝ եւրոպական պետութիւնների դեսպանները միջամտութիւն գործելու համար սպասում էին ռուսաց դեսպանի՝ որպէս Թիւրքական լծի տակ մաշվող քրիստոնեաների բնական և աւանդական պաշտպանի՝ նախաձեռնութեան։ Իսկ պ. Նելիդովը լռում էր և Թշնամաբար ոչինչ չէր անում, եթէ միայն—ինչպէս դեռ մինչև այսօր համոզված են ականատեսդեսպանները—չէր էլ գրգռում Թիւրքերին։

Սակայն ամենից ցաւալին այն է, որ ռուսաց քաղաքական բիւրոկրատիայի այսպիսի քաջագործութիւններին աւելի քան անտարբեր վերաբերվում էր այն ժամանակ և ռուս հասարակութիւնը։ Պաշտօնական և կիսապաշտօն մամուլը անխոնջ հալածում ու ցեխն էր կոխում հայերին, որպէս անսանձահարելի սեպարատիստների և Ռուսաստանին դաւաճանողների։ «Новое Время»-ն տպագրում էր երևակայական ֆելիէտոններ հայկական թագաւորութեան մասին մինչև Ռոստով-Դոնի վրա և Русскій Странникъ-ի (հանգուցեալ Ե. Լ. Կոչետովի) թղթակցութիւնները, որոնց մէջ հերքվում էին Կ. Պոլսի կոտորածի սոսկալի իրողութիւնները և Թիւրքերը հռչակվում էին

արդար «պետական տեսակէտից»։

Մինչև անգամ ռուս ազատամիտ շրջաններում հայերի բաղդը չէր բանում։ Միխայլովսկին այդ ժամանակ շնորհ արաւ ասելու հայ հայրենասէր Պր—սկուն, թէ նա հայերին ճանաչում է, որպէս չարչիների, իսկ Լեւ Տոլստոյը մերժեց Զանշեանի խնդիրը և հրաժարվեց մասնակցելու նրա բարեգործական Հաւաքածուին ի նպաստ Սասունի և Փոքր-Ասիայի ուրիշ աւերված տեղերի տառապեալների։

Այս հանգամանքների մէջ զարմանալի չէ, որ հայերի աչքերն և համակրանքը, շուռ գալով Ռուսաստանից, դարձան Արևմուտքի՝ Անգլիայի կողմը։ Չէ՞ որ Անգլիան ընդունել տուեց Բերլինի կոնգրէսում հայկական բարենորոգումները։ Չէ՞ որ Անգլիայից էին որոտում Գլադստոնի հզօր բողոքները։ Ցայտնի է ամենքին, որ Անգլիան, հայկական սպանդանոցի տպաւորութեան տակ, պատրաստ էր պնդելու, որ անյապաղ իրագործվեն բարենորոգումները՝ համակարծիք և աջակից ունենալով Իտալիային։ Բայց դիպլոմատիական այդ արշաւանքը քանդեց Ֆրանսիան, ի դէմս արտաքին գործերի մինիստր Հանոտոյի, որ հայկական հարցի հիմունքը խիստ վտանգաւոր համարեց Ֆրանս-ռուսական դաշնակցութեան համար։

Ռուսաց դիպլոմատիայի ահագին սխալն այն էր, որ նա թոյլ չը տուեց պաշտպանել փոքր-ասիական քրիստոնեաներին եւրոպական

պետութիւնների պատերազմական նաւերի—միջազգային պահակների—մշտական ներկայութեամբ Բոսֆորում։ Այսպիսով բանից դուրս էր գալիս, որ Ռուսաստանը անում է ամեն ինչ սուլթանի համար, իսկ հայերի համար—ոչ-ինչ, ու դեռ աւելին՝ նա կարծես դաշն էր կապել սուլթանի հետ հայերի դէմ։ Տպաւորութիւնը հասկանալի է։ Անգլիան դարձաւ պաշտելի։ Երախտագիտութեան ոգևորված ուղերձներ մէկը միւսի ետևից թռչում էին Անգլիա՝ Գլադստոնին։ Իսկ ռուս մամուլը՝ հնազանդ Ասիական դէպարտամէնտի ներշնչումներին՝ բղաւում-ճղաւում էր անգլիական դաւերի և հայերի դաւաճանութեան մասին։

Ռուսաստանի հակահայկական քաղաքականութիւնը չէր կարելի արդարացնել նոյն իսկ գործնական օգուտներով ազգային եսականութեան տեսակէտից։ Նա գլխովին ՀԱՍԱԿԱՐ էր հէնց իրան՝ Ռուսաստանին, որովհետև խորտակում էր նրա բարոյական համարումը Փոքր-Ասիայում մի այնպիսի ժամանակ, երբ Մերձաւոր Արևելքի թատերաբեմի վրա ոտք էր կոխում մի նոր դերասան՝ չափազանց կարևոր, եթէ ոչ վճռողական դեր ստանձնած։ Դա Վիլհելմ II-ն էր, գերմանական կայսրը, որի քնքոյշ բարեկամութեան մէջ սուլթան Աբդուլ-Համիդը պաշտպանութիւն գտաւ իր համար հաւասարապէս վտանգաւոր և Ռուսաստանից, և Անգլիայից։ Ստանալով բազմաթիւ մենարտանութիւնների գրաւականներ,

հեղեղելով Թիւրքիան իր գործակալներով և քարոզիչներով՝ Վիլհելմն սկսեց գործել երկու ձեռքով, որոնցից աջին հարկ չէր իմանալ, թէ ինչ է անում ձախը։ Գերմանական դեսպանատան ներկայացուցիչը պաշտօնապէս բողոքում էր Բ. Դրանը հայկական կոտորածների դէմ, սակայն նոյն ժամանակ սուլթանի գըրպանում պահվում էր Վիլհելմ II-ի ինքնագիր նամակը՝ մի carte blauche արքայական բարեկամին, որի մէջ ասված էր.—թագաւորիր, ինչպէս կամքդ ուզում է. չէ՞ որ դու Ալլահի ստուերն ես երկրի վրա։

Վիլհելմ II-ի երկերեսանութիւնը ամենքին յայտնի է։ Ոչ ոք այնպէս կծու չէր ծաղրում սուլթան Աբդուլ-Համիդին մտերմական շըրջանում, ինչպէս նա. և դա հասկանալի է, որովհետև գերմանական կայսրը շատ լաւ գիտէ իր բարեկամի անձնական կենցաղը։ Բայց առևտրական հաշիւների վրա հիմնված բարեկամութիւնը հաստատուն բան է։ «Անժամանակ է»—ահա Վիլհելմ II-ի լակոնական պատասխանը հայկական հարցի բոլոր ողբ-աղաղակներին։ 1902 թուականին, ամառը, Բերլինում, հէնց այսպէս էլ ասաց պ. Լորիս-Մելիքեանին մի պրոֆէսոր, որ կայսրի անձնական բարեկամն էր համարվում. «Անժամանակ է։ Մենք ճանաչում ենք հայերին, գնահատում ենք նրանց, բայց դեռ ժամանակ չէ հայկական հարցը քաղաքական հիմքի վրա դնելու»։

Ինչ վերաբերում է հասարակական կարծի-

քին՝ արդէն յայտնի է, որ Գերմանիայում արտաքին քաղաքականութեան հարցերը համարեա թէ նրա ազդեցութեանը չեն ենթարկվում։ Գերմանիայի հասարակական կարծիքը դեռ շատ գործ ունի կատարելու երկրի ներքին սահմանադրական զարգացման և քաղաքական ինքնապաշտպանութեան հարցերում։ Արտաքին քաղաքականութիւնը կայսրի գործն է։ Կայ էլի մի զայրացուցիչ խոչընդոտ, որ զլխում է Գերմանիայի հասարակական կարծիքը հայկական հարցի դէմ։ Դա քաղաքական մի բամբասանք է,—թէ իբր ամբողջ հայկական հարցը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ռուսական խարդաւանք և հայերը ռուսական գործակալներ են։ Այս վայրենի ձևակերպութիւնը՝ յայտարարված առաջին անգամ Լիբկնեխտի կողմից՝ հայերի թշնամիները աշխատեցին տարածել ոչ միայն Գերմանիայում, այլ և Անգլիայում ու մինչև անգամ Ֆրանսիայում։

Բայց և այնպէս գերմանական հասարակութեան բոլոր խաւերում և մանաւանդ՝ համալսարանական շրջաններում ու քաղաքական առաջնակարգ կուսակցութիւնների մէջ՝ հայերը ունեն անկեղծ բարեկամներ։ Այդպիսիք են, օրինակ, պրոֆէսոր Ֆոն-Բոր՝ Հաագայի միջազգային ատեանի պատգամաւորը, Վ. Ֆորստեր՝ Բերլինի աստղաբաշխական դիտարանի կառավարիչը, սոցիալիստ-ռէվիզիոնիստ Բերնշտէյնը. հայասէր էր նմանապէս հանգուցեալ պատմաբան Մոմմզէնը։ Հայաստանի գերմանացի բարեկամների մեծամասնութիւնը պատկանում է քարոզիչների և այն մարդկանց շրջանին, որոնք կապ ունեն բողոքական քարոզչութեան հետ Արևելքում։ Նրանց գլուխ կանգնած են յայտնի դր. Լէպսիուս և Բորբախ։ Բայց այդ շրջանը իր գործունէութեամբ կրօնական—բարեգործական է և չափազանց երկչոտ քաղաքական ասպարէզում,—նա վախենում է վարկաբեկ անելուց իր կրթողական հաստատութիւնները Արևելքում։ Նոյն բանը պէտք է ասել և Դանիայի, Հոլլանդիայի, Բելգիայի, Միացեալ-Նահանգների ու Ֆրանսիայի նոյնանման շրջանների մասին։ Անգլիայում հայկական հարցը մի քիչ այլ ընթացք ունէր։ Հայերին նպաստաւոր շարժումը՝ սկսված նոյնպէս կրօնական-բարեգործական միտումներով՝ շատ ընդարձակ չափեր ընդունեց և տիրացաւ հասարակական կարծիքին։ Գլադստոնի սրոտալից ճառերի ազդեցութեան տակ՝ կառավարութիւնը հարկադրվեց ականջ դնել հասարակական խղճի ձայնին։ Այս անգամ Անգլիան ծրագրել էր միջամտել հայկական գործերին՝ առանց որ և է շահի սկզբունքի, թէպէտ և ռուս կիսապաշտօնական մամուլը հակառակն էր պնդում։ Իբրև ամենալաւ ապացոյց կարող է ծառայել դրան այն հանգամանքը, որ անգլիական պետական մարդկանց ծրագրով՝ բարեփոխութիւնների իրագործումը պէտք է յանձնվէր Ռուսաստանին։ Արգայլեան դքսի՝ 1896 թ.ին հրատարակած կրքոյկը ուղ-

ղակի յայտարարում էր, որ հայկական հարցի վերաբերմամբ Անգլիան պիտի գերադասէ մինչև անգամ Ռուսաստանի գերիշխանական հովանաւորութիւնը իրերի այժմեան դրութիւնից. նոյն իսկ մինչև հիմա անգլիական աղատամիտները՝ հաւատարիմ մնալով Գլադստոնի աւանդներին՝ կրկնում են, որ հայկական հարցի լուծումը Ռուսաստանի գործն է։ Բայց, ինչպէս արդէն ասացի, մարդասիրական քաղաքականութեան այդ բռնկումը փշրվեց՝ զարնվելով Ռուսաստանի դրական մերժմանը, որին աջակցեց և Հանոտոն։ Անգլիան մնաց սառնձնացած չափազանց թոյլ Իտալիայի հետ միասին։ Սուլթանն էլի մի անգամ դերպանցեց Եւրոպայից քաղաքական խաղի մէջ,—և զուր ու անպարտ տեղը սպանված 300,000 հայերի կորուստը մնաց առանց հատուցման...

Անգլիայի քաղաքական պարտութիւնը հայկական հարցում աւելի ևս մեծ դժբախտութիւն էր հայերի համար այն պատճառով, որ այնուհետև անգլիական կառավարութիւնը՝ տեսնելով իր անզօրութիւնը որ և է կերպ օգնելու գործին, աշխատեց վերջ դնել հայասիրական հոսանքներին, որպէս զի սրատարով սպասող ազգին չը ներշնչէ զուր յոյսեր, որոնց իրականացման ակնյայտնի անհնարաւորութիւնը չափազանց վիրաւորական կերպով կը վոնդէր Արևելքում բրիտանական անուան բազմամեայ հմայքը։

Բացի սրանից հէնց այդ ժամանակ վրա հասաւ և Տրանսվալեան պատերազմը, որ ամբողջովին կլանեց անգլիական ժողովրդի ուշադրութիւնը։ Հայաստանի սակաւաթիւ բարեկամները, որոնք հաւատարիմ մնացին նրա դատին, իր գործունէութիւնն արդէն դադարեցրած մանաժողովի անդամները և գլադստոնականները կորցրին՝ իրանց յոյսը՝ երբ և իցէ կանոնաւորելու հայկական հարցը։ Մինչև անգամ այնպիսի անյողդողդ հայասէրներ, ինչպէս, օրինակ, «Contemporany Review»-ի խմբագիր Բէնտինգ, այժմ խոստովանում են, թէ 1902—1903 թուականներին նրանք պատրաստ էին ինչով կամենաք գրազ գալ, որ հայկական հարցին այլ ևս վիճակված չէ ջրերի խորքից կրկին երես դուրս գալու Անգլիայում։

Եւ եթէ յիրաւի չարաբաղդ հայկական հարցը չը խորասուզվեց ջրերի անդունդն ու չը խեղդվեց՝ պէտք է շնորհապարտ լինել Ֆրանսիային, ուր, հակառակ շահագրգռված դիւանագէտների ջանքերին՝ ոչնչացնելու «կարմիր սուլթանի» խմբական սպանութիւնների հարցը, Հայաստանի զարհուրանքները միահամուռ արձագանք էին գտնում ընդդիմադիր կուսակցութեան երկու թևակողմերում ևս, թէ կաթոլիկների մէջ, ի դէմս Ի. Կոշէնի, կոմս դը-Մէնի և, մանաւանդ, հայր Charmetan-ի, որ հրատարակեց հայ ժողովրդի նշանաւոր մարտիրոսագրութիւնը, և թէ սոցիալիստների մէջ, որոնց գլուխ էին կանգնած Ժորէսը և

Պրէսանսէն։ Անմոռանալի է Ժան Ժօրէսի շանթահարող ուժեղ ճառը, երբ նշանաւոր հռետորը, պատգամաւորական ժողովում արված հարցապնդումի ժամանակ, կծու մտրակելով ռուս-ֆրանսիական միութեան քաղաքականութիւնը, ծանր յարձակումներ գործեց յայտնի ձեւակերպութեան վրա, որ իշխան Լոբանով-Ռոստովսկին բռնի փաթաթել էր ռուսաց փոքր-ասիական քաղաքականութեան ընթացքին։

—Ես չեմ կամենում, որ Հայաստանը դառնայ երկրորդ Բոլգարիա և որ ռուսահայերը օգուտ քաղեն Թիւրքահայաստանում բարենորոգումների միջոցով հաստատվելիք հիմնարկութիւններից և հանեն նրանց մեր դէմ։

Ֆրանսիայում ևս հայկական հարցի ճանապարհին գտնվեց իր դայթակղութեան քարը—Դրէյֆուսի գործը։ Սակայն այն մարդիկ, որոնք մի անգամ յանձն էին առել հայկական դատի պաշտպանութիւնը, ամուր բռնել էին նրանից։ 1900 թուականին Ֆրանսիայի ամենից աւելի առաջադէմ և ականաւոր գրականագէտները՝ Անատոլ Ֆրանս, Ժան Ժօրէս, Կլէմանսօ և Պրէսանսէ՝ հիմնեցին «Pro Armenia» թերթը։ Այդ հրատարակութեան իսկական խմբագիր դարձաւ պ. Ֆիյառ,—մի բանաստեղծ և հրապարակախօս, որ ականատես էր եղել Կ. Պոլսի կոտորածներին։ Թերթը շատ շուտով ժողովրդականութիւն ստացաւ և լայն չափերով տարածվեց ոչ միայն Ֆրան-

սիայում, այլ նաև ամբողջ Եւրոպայում։ Նա լաւագոյն աղբիւրն է ճշգրիտ և ոչ-կուսակցական տեղեկութիւնների հայկական գործերի վերաբերմամբ։ Նրա աշխատանքը, յարգանքով ընդունված եւրոպական բոլոր պետութիւնների մէջ՝ առաջնակարգ մամուլի ամենից աւելի պատկառելի օրգանների կողմից՝ իբր ցուցցոյց հայկական գործերում, մի կերպ, կարծես, յարութիւն տուեց հայասիրական համակրանքներին և ցոյցերին։ 1902 թուականին Բրիւսսէլում բացվեց հայասիրական կօնգրէս, որին մասնակցում էին Ֆրանսիայի, Բէլգիայի, Դանիայի և այլ երկիրների ներկայացուցիչները։ Համաժողովը շատ էլ բազմամարդ չէր, բայց նրա վճիռներին ջերմ արձագանք տուին և միացան ժամանակակից քաղաքակրթութեան ամենաականաւոր անձինք։ Այդ օրերից սկսած հայկական հարցը Ֆրանսիայում արագութեամբ աճում ու ծաւալվում է քաղաքական բոլոր խաւերի ու կուսակցութիւնների մէջ՝ անփոփոխ առաջ գալով բոլոր միջազգային կօնգրէսներում, որոնք շօշափում են այս կամ այն ճնշված ազգութեան գործերը։ Այդ ցիրուցան կայծերը միացնելու և նրանցից ամբողջական բոց ստեղծելու նպատակով՝ կազմակերպվեց հսկայական միտինգ Chateau d'Eau թատրոնում—մի նշանաւոր իրողութիւն, որ արտասովոր կարևորութիւն ունէր ոչ միայն հայերի, այլ նաև Ֆրանսիայի համար։—Թերևս առաջին անգամ տեսնում էր Ֆրան-

սիան, որ ամենաբազմաղան և սովորաբար միմեանց թշնամի կուսակցութիւնների ներկայացուցիչները կարողացել են համաձայնվել միաբան գործելու համար, խաղաղ կերպով մօտեցել են իրար և խօսում են իբրև մի անձնաւորութիւն՝ մի ընդհանուր և ներդաշնակ բողոք արտայայտելով։ Այդ բողոքի մէջ թիւրքական կարգերի դէմ միացել էին իրար հետ պահպանողական—կլերիկներ, ինչպէս Դ. Կոշէն և Պոլ Լէրոյ, սոցիալիստներ, ինչպէս Ժօրէս և Պրէսսանսէ, նացիոնալիստներ, ինչպէս Միլուա, օպպորտունիստներ և արմատականներ, ինչպէս Անատոլ Լէրուա Բոլիէ կամ Դէստուրնէլ դը Կոնստան, Հաագայի միջազգային ատեանի նախկին պատգամաւորը, մի եռանդոտ քարոզիչ խաղաղ քաղաքականութեան, որ և ընտրվեց միտինգի նախագահ։

Բոլոր կուսակցութիւնների այս բարձրագոչ բողոքը ստեղծեց համակրական ցոյցերի մի ամբողջ հոսանք քաղաքակիրթ աշխարհի զանազան անկիւններում, և առանձնապէս արձագանք գտաւ Իտալիայում, ուր աղմկալից ցոյցեր կազմակերպվեցին Միլանում, Գենուայում, Հռոմում և այլ մեծ քաղաքներում։ Այդ բոլոր ժողովների նշանաբանը ընակոնաբար Բերլինի դաշնագրի 61-րորդ յոդուածն էր և բարենորոգումների պահանջը։

Հայկական գործի կենդանացմանը մեծապէս նպաստեցին նրա հետ կցորդ մակեդոնական

հարցի բորբոքումը 1903 թուականին և թիւրքական խժդժութիւններից առաջացած նոր դարհուրանքները։ XIX-րորդ դարի վերջում, Հաագայի միջազգային ատեանի մէջ արտայայտված գաղափարների և արևմտեան Եւրոպայի պետութիւնների մէջ դէմոկրատիայի զարգացման աղդեցութեան տակ՝ դիւանագիտութիւնը փորձեց, կարծես, ընդունելու խաղաղ և մարդասիրական նոր հոսանքներ։ Իբրև հակակշիռ «զինված խաղաղութեան» յետադէմ դաշնակցութիւններին՝ որոնք հետամուտ են նուաճման և ստրկացման նպատակների, սկսեցին կազմակերպվել ազգային խմբակցութիւններ՝ ձգտման կէտ ընդունելով խաղաղ քաղաքականութիւնն և փոխադարձ համաձայնութիւնը։ Այսպիսով ստեղծվեց մի նոր եռեքպետեան դաշնակցութիւն Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի մէջ—Եւրոպայի այդ ենթադրեալ վահանը հիւսիսային պետութիւնների նուաճողական փորձերի դէմ։ Դիւանագիտական նոր շարժումը հայկական հարցի համար ունեցաւ այն հետևանքը, որ հրաւիրվեց միջազգային ժողով և կազմակերպվեց 1903 թուականին Պարիզում Ֆրանկո-անգլո-իտալական միտինգ՝ հսկայական ցոյցով pro Armenia Սարա-Բերնարի թատրոնում։ Ֆրանսիական բազմաթիւ ընկերութիւններ և ակումբներ միացան միտինգի ապատագրական բանաձևերին, իսկ իտալական քաղաքները, ինչպէս միշտ, եռում էին հա-

մերաշխութեան միտինգներով։ 1904 թուականին միտինգը, նոյն միջազգային նախաձեռնութեամբ, կրկնվեց Լոնդոնում։ Այստեղ էլ նորից հռետորական ամբիոնների վրա հաւասարապէս բարձրացան Անգլիայի և ազատամիտներն, և պահպանողականները՝ համակված միահամուռ համակրանքի զգացմունքով դէպի տառապող ժողովուրդն և լի զայրոյթով—դէպի նրա թշնամիները։

Այս է ահա հայկական հարցի վիճակը արևմտեան երեք մեծ պետութիւնների հասարակական կարծիքի մէջ։ Հիմա տեսնենք, թէ աջողութեան ինչպիսի հաւանական յոյսեր ունի նա նոյն երեք պետութիւնների կառավարչական շրջաններում։ Ո՞ւմ վրա նա կարող է յոյս դնել էական ճնշում գործելու համար այն չարանենգ ոյժի վրա, որ նեղում է հայերին։ Ոչ մի կասկած չը կայ, որ խմբական միջամտութեան ժամին՝ ազատասէր, դէմոկրատական Իտալիան յետ չի մնայ ուրիշ պետութիւններից, բայց նա չափազանց թոյլ է միջամտութեան նախաձեռնող հանդիսանալու համար։ Անգլիան, մի անգամ այրելով շրթունքներն այդ նախաձեռնութեան գործում, հաստատապէս վճռել է այլ ևս փորձութեան չենթարկել ոչ իր պետական հեղինակութիւնը և ոչ ազգային ինքնասիրութիւնը։ Մնում է յոյսը դնել միմիայն Ֆրանսիայի վրա, մանաւանդ որ Անգլիայի կողմից շատ անգամ աջակցութեան խոստումներ են արված նրան,

եթէ միայն նա իր վրա առնի առաջարկութիւնների ձեռներէցութիւնը։ Բայց Ֆրանսիան լռում է։ Լռում էր նա և Հանոտոյի ժամանակ, որ իր արտաքին քաղաքականութեան մէջ պարում էր այնպէս, ինչպէս փչում էին Պետերբուրգում արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Լռում էր նա նոյնպէս Դելկասսէի օրերում, որ ամեն բանում աշխատում էր հակառակ գնալ իր ամենակատաղի թշնամուն՝ Հանոտոյին, և բացի սրանից համարվում էր ու ինքն էլ ցոյց տալիս իրան, իբր եռանդուն հայասէր։ Լռում է Ֆրանսիան և հիմա։ Լռութեան հանելուկը, որ ոչ ոքի հաչար գաղտնիք չէ Եւրոպայում, ռուսաց կառավարութեան սիստեմատիքական հակակրանքի մէջ է դէպի հայերը, կառավարութեան, որ յամառութեամբ փակում է իր հանրապետական դաշնակցի բերանը՝ անդադար յիշեցնելով, որ ամեն մի եւրոպական միջամտութիւն հայկական հարցի մէջ Պետերբուրգը կը համարէ casus belli (պատերազմի առիթ)։ Ֆրանսիայի կամքը՝ ազատելու կորնչող ազգը՝ միշտ փշրվում էր՝ դիպչելով ռուսական դիւանագէտների դիմադրութեան։ Նրա հնաւանդ սիստեմն է՝ կտակված դեռ Մետտերնիխից մեր զանազան Նէսսէլրոդէներին, Գորչակովներին, Գիրսներին և նրանց յաջորդներին՝ երբէք հաշուի չառնել ազգութիւնները, այլ միայներկիրները։ Այդ դիպլոմատիան միշտ համարում էր Փոքր-Ասիան մի համեղ պատառ, որին ճակատագրա-

կան կերպով վիճակված է ընդլայնելու ապագայում ռուսաց պետութեան սահմանները. նա համարում է այդ երկիրը ռուսական մի ապագայ նահանգ, և թուում է նրան, որ հայերը այդ նպատակի համար խոչընդոտ են և անյարմար։ Նա զոհում է ազգը՝ մտածելով երկրի մասին։

Վայր ի վերոյ դիտող անձնաւորութիւններին՝ եւրոպական հասարակական կարծիքի իմ այս պատմած պայքարը հայկական դատի համար կը թուայ, գուցէ, աննշան և յամենայն դէպս չափազանց թոյլ, զինազուրկ։

Մի կողմից՝ թիւրքական կոպիտ գրոհն է և Ռուսաստանի սառնարիւն թոյլտուութիւնը, իսկ միւս կողմից—միտինգների պլատոնական բանաձևերը պետութիւնների բացարձակ անզօրութեան հետ միասին։ Եւ սակայն այդ պլատոնական փոթորիկների արձագանքը շատ անգամ ստիպել է նոյն իսկ անսանձահարելի Աբդիւլ-Համիդին խոր մտածման մէջ ընկնել և վայր իջեցնել անխնայ կոտորելու համար բարձրացրած ձեռքը։ Եթէ վրդովված խղճի այդ ազաղակները չը լինէին՝ Սասունի վերջին կոտորածը, անկասկած, զարհուրելի չափեր կը ստանար։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին՝ նրա կորուստը ակներև է։ Թոյլ չը տալով պետութիւններին կատարելու իրանց պարտաւորութիւնները Փոքր-Ասիայի հայերի վերաբերմամբ՝ նա իր դէմ հանեց Եւրոպայի հասարակական կարծիքը և սպանեց հաւատը

դէպի իր կոչումը Մերձաւոր Արևելքում։ Ամենմի փորձ Ռուսաստանի կողմից ընդլայնելու իր երկիրը ի հաշիւ Փոքր-Ասիայի կընդունվի Եւրոպայում որպէս յաւակնութիւն հողային կոպիտ յափշտակութեան և կարգելվի պետութիւնների հաւաքական ուժով։ Կար ժամանակ, երբ ռուսները Եւրոպային թուում էին թիւրքերից աւելի գերադասելի Փոքր-Ասիայում,—ռուսական անշնորհք և անխիղճ դիպլոմատիան ստիպեց մոռանալ այդ ժամանակը։ Այժմ—Աբդիւլ-Համիդը ինչքան էլ որ կոտորէ, կամ այն մարդիկ, որոնք անգիտակցաբար կատարում են նրա կամքը՝ ինչքան էլ հայի արիւն թափեն թուրքերի և կօզակների սրերով,—դրանով ռուսական քաղաքականութիւնը ոչ մի թզաչափ հող անգամ չի շահի Փոքր-Ասիայում։ Իլդիզ-Քիոսկի հովանաւոր և անգիտաբար նրա քաղաքականութեան գործակալ՝ հանդուցեալ Իշխան Լոբանով-Ռոստովսկին սպանեց ռուսաց պատմական աւանդները Մերձաւոր Արևելքում և փակեց Ռուսաստանի առաջ Փոքր-Ասիայի դռները, իսկ Թիւրքիայի համար հարթեց ճանապարհը դէպի Արարատ և դէպի Ախուրեան։ Մենք թոյլ տուինք և օգնեցինք կոտորելու մեր բարեկամներին,—մեզ պատժեց բաղդը՝ տալով բարեկամական երկիրները՝ մեր կատարեալ անզօրութեան պատճառով պաշտպանելու նրանց՝ մեր կատաղի թշնամիներին։ Ուր անյայտանում է հայը՝ այնտեղ բոյն են դնում քիւրդը, թուր-

քը և թաթարը։ Ի դէմս հայերի մենք դաւաճանեցինք Ասիայում եւրոպական կուլտուրային և հազար-հինգհարիւրամեայ քրիստոնէական քաղաքակրթութիւնը նետեցինք Իսլամի ոտների տակ։ Իսլամը անգործ չէ նստած, իսկ պատմութիւնը այսպիսի սխալներ, ու այն էլ չարամիտ սխալներ, չէ ներում երբէք։

Պարիզ, 1906 թ. փետրվարի 5.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
СССР ПУ ичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясн и н а
Ա. Մ. ԱՍ Ի.ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գ. Գալստեանի—«Գուտտենբերգի» հրատարակութիւնները։

1. Պոմպէյի վերջին օրերը, Լորդ Լիտտոնի, թարգմ. Յ. Միրզայեանի . 1—50 կ.
2. Ասպետ, Վ. Փափազեանի . . 15 կ.
3. Կեանքը ծովերի խորքում, Լունկեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի . 30 կ.
4. Տրիլոբի, դրամա 4 արար. թարգմ. Լ. Մելիք-Ադամեանի . . 25 կ.
5. Եաղ-ասատ, վեպ. 1 արար. 2 պատկեր. Յակ. Ղազարեանի . . 25 կ.
6. Դարվինիզմ, Ս. Բալաղեանի (Դարվինի պատկերով) . . . 50 կ.
7. Աղնիւ գող վիպակ Ֆ. Մ. Դաստայեվսկու, թարգմ. Ն Ջ. . . 10 կ.
8. Ինքնավարութիւն և Զէմստվո, Բելոկոնսկու, թարգմ. Կ. Ջալալեանի 15 կ.
9. Տնտեսագիտական զրոյցներ, Կարիչեի, թարգմ. Կ. Ջալալեանի . 40 կ.
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Замоуправленія Кн. Г. М. Туманова. 20 կ.
11. Բերականութիւն մայրենի լեզուի (Ա., Բ. և Գ. մաս) Ս. Պալասանեանի 75 կ.
11. Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վիհագրազովի թարգմ. Խաժակի . 1 ր. —
12. Եւրոպա և Հայաստան, Ա. Ամֆիտեատրովի . . . . 10 կ.
14. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի . . . . 50 կ.

—

Գումարով գնողներին զիջումով։ Գրախանութը վերադիր վճարով ուղարկում է միմիայն նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Դիմել.—Тифлисъ Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну

ՀՀ Ազգային գրադարան
NL0198279